ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԱԲԴՈՒՍ ՍԱԼԱՄԻ ԱՆՎԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՖԻԶԻԿԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԻՋԵՎ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն (ԳՊԿ) և Աբդուս Սալամի անվան տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոնը (ՏՖՄԿ) (այսուհետ՝ Կողմեր), գիտակցելով համագործակցության կարևորությունը՝ որպես Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկամաթեմատիկական գիտությունների բնագավառում իրականացվող հետազոտությունների խթան, սույն Պայմանագրով ստանձնեցին հետևյալ պարտավորությունները.

ԳՊԿ՝

Ա. 50 000 եվրո միանվագ ներդրում ՏՖՄԿ հանգանակային ֆոնդին,

Բ. 10 000 եվրոյից ոչ պակաս տարեկան ներդրում ՏՖՄԿ ծառայությունների համար.

ՏՖՄԿ՝

Հիմք ընդունելով վերոնշյալ «Ա» և «Բ» կետերը՝ ՀՀ գիտության ոլորտի պատասխանատուն կամ վերջինիս կողմից նշանակված անձն իրավունք ունի դառնալու ՏՖՄԿ միջազգային գործունեության խորհրդի անդամ: Վերոնշյալ խորհուրդն ուսումնասիրում և առաջարկություններ է ներկայացնում ՏՖՄԿ միջազգային գործունեության վերաբերյալ՝ հատուկ ուշադրություն դարձնելով բոլոր մակարդակներում ընթացող համագործակցային գործընթացներին՝ անկախ պետությունից կամ տարածաշրջանից:

Բացի այդ, ՏՖՄԿ-ն, համաձայնելով ներդնել «Բ» կետում նշված գումարի չափից ոչ պակաս միջոցներ, պարտավորվում է.

1. Հայաստանի Հանրապետությունում կազմակերպել տարածաշրջանային դպրոցներ, գիտագործնական հանդիպումներ և գիտաժողովներ՝ համաձայն

ՏՖՄԿ արտաքին գործունեության բաժնի վարած գործունեությանը՝ եթե վերջինս համահունչ է զարգացող երկրների նկատմամբ ՏՖՄԿ առաքելությանը:

2. աջակցել հայ ուսանողների ու ակտիվ գիտական գործունեություն ծավալող մինչև 45 տարեկան հետազոտողների այցը ՏՖՄԿ՝ երկկողմ համաձայնեցված ժամանակահատվածում: Այցի ժամանակահատվածը կհամընկնի ՏՖՄԿ-ում ընթացող և զգալի նշանակություն ունեցող միջոցառումների հետ: Այցելող հետազոտողների ընտրությունը կկատարվի ՏՖՄԿ կողմից՝ ԳՊԿ առաջարկությամբ:

3. աջակցել Հայաստանի Հանրապետության և հարևան պետությունների միջև գործող տարածաշրջանային գիտահետազոտական ցանցին:

Ապագայում՝

Կողմերը կքննարկեն Հայաստանի Հանրապետությունում համաֆինանսավորման սկզբունքով ՏՖՄԿ մասնաճյուղ հիմնադրելու հնարավորության հարցը: Մասնաճյուղի նպատակն է տարածաշրջանում ֆիզիկայի և դրան հարակից ոլորտներում իրականացվող հետազոտությունների խթանումը, ինչպես նաև կողմերի միջև գիտական տեղեկատվության, մտքի և գիտնականների փոխանակման համար միջազգային հարթակի ապահովումը:

Սույն Պայմանագիրը կնքվում է 5 (հինգ) տարի ժամկետով և ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Սույն Պայմանագիրը կարող է դադարեցվել, եթե Կողմերից որևէ մեկը երեք ամիս առաջ ծանուցում է մյուս Կողմին իր համապատասխան մտադրության մասին:

Կատարված է 2 (երկու) բնօրինակից՝ յուրաքանչյուրը հայերեն եւ անգլերեն՝ ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Պայմանագրի մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

ՏՖՄԿ կողմից՝	ԳՊԿ կողմից՝
Ֆ.Քուեվեդո	Ս.Գ. Հարությունյան
Աբդուս Սալամի անվան տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոն Տնօրեն	ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե Նախագահ
Տրիեստ, Իտալիա	Երևան, Հայաստան
«17» 05 2013թ.	«17» 05 2013թ.